

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ ՆՆԵՐԸ

Բառակապակցութիւնը նիւթական իմաստ ունեցող երկու եւ աւելի բառերի կապակցութիւն է, որի կազմում է բաղադրիչները միմեանց հետ կապում են բերականօրէն եւ իմաստով: Բառակապակցութիւնը նախադասութիւնից տարբերում է նրանով, որ ամփոփ կամ աւարտուն միտք չի արտայայտում, այլ ունենում է լրացում եւ լրացեալ բաղադրիչներ, որտեղ լրացումը լրացնում է լրացեալին եւ կոչւում է ստորադաս անդամ, իսկ լրացեալը՝ գերադաս անդամ: Ուրեմն՝ բառակապակցութեան եւ նախադասութեան հիմնական տարբերութիւնը ստորոգումն է, այսինքն՝ յատկանիշը ենթակային վերագրելը, նրա հետ կապելը, որը նախադասութիւնն ունի, իսկ բառակապակցութիւնը չունի. օրինակ՝ ջանասէր աշակերտ բառակապակցութեան մէջ ջանասէր լրացումը ցոյց է տալիս աշակերտի ինչպիսի լինելը, այսինքն՝ որոշիչ է: Իսկ երբ ասում ենք (նա) ջանասէր աշակերտ է, ունենում ենք նախադասութիւն, որովհետեւ այդտեղ ստորոգում կայ:

Բառակապակցութիւնները կարելի է դասակարգել տարբեր սկզբունքներով, այսպէս՝ ա) ըստ գերադաս եւ ստորադաս անդամների խօսքիմասային պատկանելութեան, բ) ըստ բաղադրիչների քանակի, գ) ըստ բաղադրիչների միմեանց հետ ունեցած կապի եւ այլն:

Ըստ խօսքիմասային պատկանելութեան բառակապակցութիւնները կարող են լինել անուանական, բայական, ածականական, մակրայական, թուականական եւ այլն:

Օրինակ՝ ընդունակ աշակերտ, չափազանց դիւրիչ, մատուցանել

զկերակուրս, աւագ յամենեցունց, իրք երկու հազար, եւ այլն:

Բառակապակցութեան բաղադրիչ անդամներն իրար հետ կարող են կապուել տարբեր կերպ, եւ ըստ այդ կապի սերտութեան՝ կարող են լինել ազատ եւ կայուն բառակապակցութիւններ. օրինակ՝ արեւելեան ցող, արձակել զգերիս, արջու խաղող, արժունի գինի, յամէ ամ, տարմ տարմ, օն անդր եւ այլն, որոնք ազատ բառակապակցութիւններ են: Գործածութեան բարձր յանախականութիւն ունեն կայուն բառակապակցութիւնները, որոնց բաղադրիչների կապն աւելի սերտ է. դրանք ունեն իմաստային միասնութիւն, եւ բաղադրիչները միմեանցից անբաժանելի են, օրինակ՝ անտես առնել (արհամարհել), արմատախիլ առնել (արմատով հանել, ոչնչացնել), գան հարկանել (ծեծել), ի կիր առնուլ (կիրառել, գործածել), ի մտի դնել (մտադրուել), նախանձուկս արկանել (նախանձել), ընդ առաջ ելանել (դիմաւորել, մէկին ընդառաջ գնալ). «Ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան» (Կորիւն, 40):

Ըստ բաղադրիչների քանակի բառակապակցութիւնները լինում են երկրաբաղադրիչ կամ սովորական եւ բազմաբաղադրիչ: Գրաբարում աւելի յանախակի են հանդիպում երկրաբաղադրիչ բառակապակցութիւնները, ինչպէս, օրինակ, յականէ յանուանէ (անուն առ անուն, անձամբ), ապախտ առնել (զանց առնել, անտեսել), Տէր զօրութեանց, Գիրք արարածոց, արքայից արքայ եւ այլն: Երբեմն հանդիպում ենք նաեւ բազմաբաղադրիչ, հիմնականում երեք բաղադրիչով կազմուած բառակապակցութիւններ, օրինակ՝ ընդ բանի առնել

(բանադրել), գալ ի կուսական արգանդ (ծնունել կոյսից), գիրկ ընդ խառն լինել (գրկախառնունել), ձեռն ի գործ արկանել (ձեռնարկել), գուն գործել՝ դնել (չանալ, աշխատել), երկիրդ մահու ի վերայ դնել (մահով սպառնալ), ընդունել ի սուրբ աւագանէ (կնքահայր լինել), ի չափու ունել զանձն (չափը պահել, չափից չանցնել) եւ այլն: Բերենք բնագրային օրինակներ. Ո ոք ի նոցանէ զանձն ի մահ դնելով գուն գործիցէ (Յդիշէ, 96): Առաւել եւս փութայր, գուն եղեալ յորդորելով զամենեսեան առ ի բարեացն քաջալիբութիւն (Բուզանդ, 12):

Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ բազմաբաղադրիչ բառակապակցութիւնները ոչ թէ միայն էիջ են, այլ եղածներն էլ ունեն սակաւ գործածութիւն:

Կայուն կապակցութիւնները սովորաբար կազմում են մարմնի առանձին մասերի անուններով, մասնաւորապէս ակն, աչք, բերան, գլուխ, ծունկ (ծունր, գուն), ձեռն, ոտն եւ այլ բառերով: Հարկ է նշել, որ ծագման տեսակէտից դրանք նախ գործածուել են ժողովրդախօսակցական լեզուով, եւ ապա գրականութեան միջոցով թափանցել են գրական լեզու: Այժմ բերենք այնպիսի բառակապակցութիւնների օրինակներ, որոնցում գերադաս անդամն արտայայտուում է նշուած բառերով. ակն առնուլ (լաւ աչքով նայել), ակն ածել (նայել, զգուշանալ, ակնարկել), ակն դնել (աչք դնել մէկի կամ մի բանի վրայ), յակն անկանել (աչքին երեւալ, ըստ ակն անկանել (հազիւ երեւալ), աչս առնուլ (աչառել, ակնածել), յաչաց հանել (աչքից գցել), յաչաց ելանել (աչքից ընկնել, անհաճոյ լինել), ի բերանս լինել (պապանձուել), ի միասին բերանանալ (խօսակցել), ի գլուխ հանել՝ տանել՝ ածել՝ բերել (գլխաւորել,

աւարտել), ի գլուխ ելանել՝ հասանել՝ գալ՝ երթալ (լրանալ աւարտուել), ծունր կրկնել՝ դնել՝ արկանել կամ ի գունս կալ՝ իջանել (ծնրադրել, ծնկի գալ, ծնրադիր երկրպագել) եւ այլն: Բերենք մի քանի բնագրային օրինակներ. «Եւ ոչ պահապանացն յակն անկեալ» (Յդիշէ), Կայր ի գունն առ ոտս սրբոյն (Ճառքնտիր):

Գրաբարում աւելի յաճախ հանդիպում ենք ձեռն գերադաս անդամով կազմուած բառակապակցութիւններին, այսպէս՝ ձեռն արկանել (ձեռնարկել, սկսել), ձեռն ի գործ արկանել առնել (սկսել, ձեռնարկել), ձեռն տալ (յարմար լինել), ձեռն դնել (ստորագրել, ձեռնադրել), ի ձեռն առնուլ (բռնել, տիրել, կրել), ի ձեռն տալ (ընձեռել, շնորհել, տալ), ձեռն յանձին հարկանել (իրեն ապաստան լինել): Օրինակներ՝ Ձեռն արկեալ գրել կտակ յաւիտեանական... հրամայեաց (Ագաթ, 204): Ամենայն ոք ձեռն ի գործ արկեալ... գործէին զգործն (Ն.տ., էջ 393): Աղաչէին ձեռն տալ նոցա (Ա Մակար., ԺԳ 46):

Գրաբարում հանդիպում ենք նաեւ այնպիսի բառակապակցութիւններին, որոնցում գերադաս անդամն արտայայտուում է ձեռն կամ ձեռն արմատով կազմուած բարդ բառով, օրինակ ձեռակալ առնել կամ ձեռքակալ առնել (բռնել, ձեռքակալել), ձեռնաձիգ լինել (ձեռքը մեկնել), ձեռնամուխ լինել (սկսել, ձեռնարկել), ձեռնատուր լինել (անձնատուր լինել, յանձնուել), ձեռնեբրէց լինել (համարձակ՝ յանդուզն լինել, յանդգնել), ձեռնհաս լինել (Վարդանալ, կարող լինել), ձեռնտու լինել (ձեռք տալ, օգնել, յարմար լինել) եւ այլն: Ինչպէս տեսնում ենք, ձեռն գերադաս անդամով կազմուած բառակապակցութիւններում այդ բառը հանդէս է գալոս երեք հիմնով՝ ձեռն, ձեռն, ձեռք: Այժմ

քերենք մի երկու բնագրային օրինակներ. Չեռնտու լինել զրկելոց կամ միմեանց (Յանախապատում ճառք, ԺԸ): Տեսնալ զբռնութիւն զօրութեան նոցա՝ ձեռնատու եղեն եւ յաւելան ի զօրս նոցա (Ղեւոնդ):

Աւելի քիչ բառակապակցութիւնների ենք հանդիպում ոտն գերադաս անդամով, այսպէս՝ ոտն արկեալ՝ հարկանել կամ ընդ ոտն հարկանել (արհամարհել), յոտն կալ (կանգնել), առ ոտն կամ առ ոտս (առընթեր, մօտ), ոտն ոտն կամ ոտն առ ոտն (աստիճանաբար, հետեզհետէ) եւ այլն: Բնագրային օրինակներ. Մի՛ ումեք լիցի խէք ու խութ այնուհետեւ ընդ ոտս անկանել եւ խափան առնել (Ազգաբ., 403): Անդէն յոտն կացեալ՝ վաղվաղակի շարժեաց զպարանն (Ազգաբ., էջ 115):

Գրաբար մատենագրութեան մէջ գտնում ենք նաեւ ոտն արմատով կազմուած բարդ բառերով բառակապակցութիւններ, ինչպէս, օրինակ՝ ոտնկոխ լինել (ոտքի կռուան գտնել կամ տրորել), ոտնհար լինել (ծիծաղել մէկի անյաջողութեան վրայ) եւ այլն:

Ըստ գերադաս անդամի խօսքի-մասային պատկանելութեան բառակապակցութիւնները բաժանուում են հետեւեալ տեսակների՝ գոյականական, բայական, ածականական եւ այլն:

Գոյականական բառակապակցութիւններ: Գրաբարում մեծ թիւ են կազմում գոյականական բառակապակցութիւնները, որոնց կազմում գերադաս անդամը կամ լրացեալն արտայայտուում է գոյականով, իսկ ստորադաս անդամը կամ լրացումը կարող է արտայայտուել տարբեր խօսքի մասերին պատկանող բառերով: Գերադաս անդամը կարող է դրուել ստորադաս անդամից առաջ կամ յետոյ, օրինակ՝ առաջական հոլով, անփակ գիր (Աստուծոյ անուըր), աշխար-

համար գիր (մարդահամար), վերին աշխարհ (երկինք) եւ այլն (ետադաս), իսկ արժայութիւն Աստուծոյ, աստղ առաօտու (արուսեակ), գիրք ծննդոց, արիւն խաղողոյ (գինի), խորհուրդ գոհութեան (սուրբ հաղորդութիւն), խօսք հաւու (աֆղաղի կանչելը) եւ այլն (նախադաս): Ինչպէս օրինակներից էլ երեւում է, երբ ստորադաս անդամը լինում է ետադաս, այն մեծ մասամբ արտայայտուում է սեռական հոլովով: Հանդիպում ենք նաեւ այլ հոլովներով եւ նախդիրներով կազմուած բառակապակցութիւնների, օրինակ՝ ձայն բարբառոյ յանապատի (անպատասխան մնալ, ասողին լսող չլինել), գոյի իւրով (լրիւ, լրութեամբ), զհասարակ գիշերաւ կամ զմէջ գիշերաւ (կէս գիշերը) եւ այլն:

Գոյականական բառակապակցութիւնները հիմնականում լինում են երկրադարձիչ, բայց հանդիպում են նաեւ բազմարդարձիչ բառակապակցութիւններ, որոնց կազմում սովորաբար լինում է որեւէ նախդիր, օրինակ՝ առ նանապարհական երգ (հեյլեանցիների մաղթողական տաղը), ժամանակ առ ժամանակ, ժամ ի ժամ (հետզհետէ), ժամ ընդ ժամ (հետզհետէ), առ այնու ժամանակաւ (այն ժամանակ), ի կերպս կերպս (տեսակ-տեսակ) եւ այլն:

Գոյականական բառակապակցութիւններում գերադաս եւ ստորադաս անդամներն ունենում են տարբեր յարաբերութիւններ՝ որոշիչ-որոշեալ, օրինակ՝ անմոլար աստեղք, պսակ փշեայ, աւելի անուն եւ այլն, յատկացուցիչ-յատկացեալ, ինչպէս՝ պսակ արեգական, դրան երէց, պտուղ աչաց, Տէր զօրութեանց, Որդի մարդոյ, ունայնութիւն ունայնութեանց, արժայութիւն երկնից եւ այլն:

Գոյականական բառակապակ-

օրինակ՝ Որոց ոգիքն բուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ (Եղիշէ, 2րդ եղանակ). երկնաւոր ստորադաս անդամը որոշիչ է, իսկ յ... առաքինութենէն գերադաս անդամը՝ բնութեան (անջատման անուղղակի) խնդիր:

Սեռական հոլովով արտայայտուած ստորադաս անդամը կատարում է յատկացուցչի պաշտօն, օրինակ՝ Եւ մինչեւ ի մուտս արեգական անդադար լինէր գործ դառնութեան (Եղիշէ, 5րդ եղանակ):

Ուղղական հոլովով դրուած բառակապակցութիւնները սովորաբար ունենում են անուանողական արժէք եւ կարող են գործածուել իրրեւ վերնագրեր, օրինակ՝ Մուշեղ զօրավար, Սմբատ սպարապետ, Արշակ արքայ, Պապ թագաւոր, Սողոմոն Իմաստուն եւ այլն:

Բայական բառակապակցութիւններ: Գրաբարում բառական տարածուած են բայական բառակապակցութիւնները, որոնք կարող են գործածուել բոլոր այն ձեւերով, ինչ գերադաս անդամն առանձին վերցրած, օրինակ՝ զպատմութիւնն ընդ գրով արկանել, խօյս տալ ի թշնամւոյ, ետ դառնալ յերկրէ եւ այլն: Իսկ երբ դրանց կազմում եղած գերադաս անդամը հանդէս է գալիս խոնարհուած ձեւով, այն արդէն ունենում է ստորոգում եւ դառնում է նախադասութիւն, այսպէս՝ ետ դարձաւ յաղթութեամբ, խոյս տայր ի թշնամւոյ եւ այլն:

Բայական բառակապակցութիւնների կազմում յաճախակի են հանդիպում առնել, լինել, տալ, արկանել, հարկանել, եւ այլ բայեր, օրինակ՝ անտես առնել՝ լինել (արհամարհել, արհամարհուել), աշխատ առնել՝ լինել (աշխատեցնելը, աշխատիլ) (աշխատակից

լինել (գործակցել), ապախտ առնել (անտեսել), ապախտ լինել (անտեսուել), ատենախօս լինել (ատենաբանել, ատեանում խօսել), դատ տալ (վրէժ լուծել), գահի հարկանել (շատ վախենալ), բողոք արկանել՝ հարկանել բառնալ ունել՝ կարգալ (բողոքել գանգատուել), նախամատոյց առնել (նախածեռնել) եւ այլն:

Բայական բառակապակցութիւնները կազմում են նաեւ նախդիրներով եւ նրանց խնդիրներով, օրինակ՝ առ ոչինչ համարել (արհամարհել, բանի տեղ չդնել), զմտաւ ածել, զսրով երթալ, գանձամբ գալ (իր մասին հոգ տանել), նախանձել ընդ ումեք, գութ ունել ընդ ումեք, ընդ գինիս մտանել, հանել ընդ սուր, ընդ գրով արկանել (գրել, գրի առնել), ընդ ահիւ արկանել, ըստ ակն անկանել (աչփից վրիպել, աչփին չերեւալ), ի թիկունս հասանել (օգնել, օգնութեան հասնել), ի խաչ ելանել, ի խաչ հանել, ի կատար հասանել (աւարտել, վերջացնել), ի հաւանութիւն գալ (համաձայնութեան գալ), ի գերութիւն վարել, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ, ի միտ առնուլ, ի չափ հասակի հասանել (հասունանալ, չափահաս դառնալ) եւ այլն: Բնագրային օրինակներ. Առ ոչինչ համարիմ գայնչափ ի ձէնջ օգուտս (Փարպեցի, 48): Իրրեւ ընդ գինիս մտին՝ հրաման ետ թագաւորն (Ագաթանգեղոս, 30): Ետու հրաման զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր (Փ. Բուզանդ, 140): Ի հաւանութիւն եկեալ՝ արարին խաղաղութիւն ամս սակաւս (Խորենացի, 270): ԶԱժդահակ սպան, եւ զտուն նորա ի գերութիւն վարեաց (ն.տ., 85): Որ ընթեռնու՝ ի միտ առցէ (Փարպեցի, 193): Օր ըստ օրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային (ն.տ., 152) եւ այլն:

Աճականական բառակապակ-

ցուփիւնների ստորադաս անդամը դառնում է նախադասութեան որոշիչ, յատկացուցիչ, իսկ գերադաս անդամը կարող է կատարել տարրեր պաշտօններ, ցուփիւնները գրարարում շատ քիչ են հանդիպում: Նշենք դրանցից մի ֆանիսը. տեղեակ բանին՝ խորհրդոյն հանոյակից լինել ումեմն, մահու արժանի, քաջ յայտնի, անասելի չար, անպատմելի մեծ, հմուտ գործոյն, զուտ ոսկեայ, յամենայնի ընդունակ եւ այլն:

Ոչ ինչ արժանի մահու կամ կապանաց գործէր այրս այս (Գործք Առաքելոց, ԻԶ, 31): Որ հմուտ եւ տեղեակն էր աստուածաբեր խորհրդոյն (Ագաթանգեղոս, 146): Զբարկանալն

չսպանանելոյն ոչ եթէ հակառակ ինչ է, այլ կարի քաջ միարան (Եզնիկ, 278):

Որպէս եզրակացութիւն կարող ենք նշել, որ գրարար մատենագրութեան մէջ լայնօրէն գործածուել են գոյականական եւ բայական բառակապակցութիւնները, որոնք գրարարի բառապաշարը հարստացրել են ոճական արտայայտութիւններով:

Բառակապակցութիւնների մեծ մասը նոյնութեամբ կամ որոշ փոփոխութեամբ (հիմնականում կցական բարդութեան վերածուած) հետագայում անցել են հայոց լեզուի յաջորդ փուլերին՝ միջին հայերէնին եւ աշխարհարարին:

ՏՕՔԹՕՐ ԳԷՈՐԳ ԹՕՍՈՒՆԵԱՆ